Հաստատում եմ՝
*Քննական հանձնաժողով*_____

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ԳՅՈՒՄՐՈՒ №23 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի
9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ

«ՀՀ տարածքի բնակլիմայական աղետների ռիսկերը և դրանց կանխարգելման ուղիները»

Տևողություն 9 շաբաթ/9 ժամ/
Մասնակիցներ՝ IX դասարան
2025-2026 ուստարի
II կիսամյակ

Ուսումնական նախագծի ղեկավարներ՝

Գ.Միրոյան_____
Մ.Ավետիսյան_____
Ց. Մանուկյան_____

Թեմա՝ ՀՀ տարածքի բնակլիմայական աղետների ռիսկերը և դրանց կանխարգելման ուղիները Առարկաներ՝ աշխարհագրություն, ֆիզիկա, կենսաբանություն	
Ուսումնական տարի	2025-2026
Քննական նախագծի անվանում՝	ՀՀ տարածքի բնակլիմայական աղետների ռիսկերը և դրանց կանխարգելման ուղիները
Տևողությունը/ շաբաթների քանակը՝	9շաբաթ
Նախատեսված ժամաքանակ	9ժամ
Նախագծի իրականացման փուլեր՝ ժամաքանակով	1.Ի՞նչ է իրենից ներկայացնում բնակլիմայական աղետը և ի՞նչ բնակլիմայական աղետներ են առկա ՀՀ տարբեր մարզերում:(1ժամ) 2.Բնակլիմայական աղետների ազդեցությունը բնակավայրերի տեղաբաշխման, բնակչության թվի փոփոխության և գյուղատնտեսության վրա:(1ժամ) 3.Ի՞նչ միջոցառումներ են տարվում ներկայումս ՀՀ բնակլիմայական աղետների վտանգների կանխարգելման, կարգավորման և լուծման համար:(1ժամ) 4.Բնակլիմայական աղետների հիմնախնդրի արդիականությունը ՀՀ-ում:(1ժամ) 5.Հանդիպում Մարմաշենի համայնքի ղեկավարի հետ:(1ժամ) 6.Ի՞նչպես և ի՞նչ միջոցներով են կանխարգելում բնակլիմայական աղետների ռիսկերը ՀՀ-ում: Բնակլիմայական աղետների կանխարգելելու նոր լուծումներ և միջոցներ:(1ժամ) 7.Այցելություն «ԳՅՈՒՄՐՈՒ ՍԵՅՍՄԻԿ ԿԱՅԱՆ»:(1ժամ) 8.Գրքույկի ստեղծում:(1ժամ) 9.Նախագծի ներկայացում(1ժամ)

Նախագծի նպատակը

Զարգացնել գիտելիքներ ՀՀ տարածքի բնակլիմայական աղետների ռիսկերի վերաբերյալ և ձևավորել վերլուծական հմտություններ աշխարհագրական, սոցիալական, տնտեսական, վարչական, քարոզչական միջոցառումներով պայմանավորված՝ խնդիրների կանխարգելման, կարգավորման և լուծման վերաբերյալ:

Նախագծի վերջնարդյունքները

- Ձևավորել սովորողների մոտ ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն
- Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ
- Զարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտություններ աշակերտների մոտ
- Զարգացնել սովորողի ճանաչողական հետաքրքրությունը
- Ապահովել կյանք - կրթություն իրական կապը

Առարկայի/ առարկաների այն թեմայի(թեմաների) վերջնարդյունքները, որոնց վերաբերվում է՝ նախագիծը

Ճանաչել Հայաստանի Հանրապետությունում հանդիպող հիմնական բնակլիմայական աղետները:
Բացատրել այդ աղետների առաջացման պատճառները և տարածման առանձնահատկությունները Հայաստանում:
Գնահատել բնական աղետների ռիսկերը մարդկանց, տնտեսության և շրջակա միջավայրի համար:
Ներկայացնել աղետների կանխարգելման և վնասների նվազեցման հիմնական միջոցները՝
Զարգացնել հետազոտական և վերլուծական հմտություններ, աշխատելով քարտեզների, վիճակագրական տվյալների և տարբեր աղբյուրների հետ:
Ձևավորել թիմային աշխատանքի և ներկայացման հմտություններ՝ ներկայացնելով նախագիծը պրեզենտացիայի, պաստառի կամ զեկույցի միջոցով:

Հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը
Ինչպե՞ս կարելի է նվազեցնել Հայաստանի Հանրապետությունում բնակլիմայական աղետների ռիսկերը և ապահովել բնակչության անվտանգությունը:
Ուղղորդող հարցեր
• Ի՞նչ է իրենից ներկայացնում բնակլիմայական աղետը: • Ի՞նչ է բնակլիմայական աղետների վտանգ է սպառնում ՀՀ_ում: • Ի՞նչ բնակլիմայական աղետներ են առկա ՀՀ տարբեր մարզերում: • Ի՞նչ ազդեցություն ունեն բնակլիմայական աղետները բնակավայրերի տեղաբաշխման, բնակչության թվի փոփոխության և գյուղատնտեսության վրա: • Ի՞նչ միջոցառումներ են տարվում ներկայումս ՀՀ բնակլիմայական աղետների վտանգների կանխարգելման, կարգավորման և լուծման համար: • Արդյո՞ք ՀՀ-ում բնակլիմայական աղետների հիմնախնդրին արդիական է: • Ի՞նչպես և ի՞նչ միջոցներով կանխարգելել բնակլիմայական աղետների ռիսկերը ՀՀ-ում: • Առաջարկե՛ք բնակլիմայական աղետների կանխարգելելու նոր լուծումներ և միջոցներ:
Ուսումնական նախագծի նկարագիրը
• Նախագծի թեմայի ընտրություն • Հիմնահարցի ձևակերպում • Աշխատանքային խմբերի ձևավորում. Հիմնախնդրի հիմնավորում • Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաշխում • Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ • Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ • Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում • Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում • Գործողությունների ծրագրի առաջարկ

Ուսումնական նախագծի արտադրանքի/պրոդուկտի ներկայացման տեսակներ	
☐ Ամսագիր կամ թերթ,պաստառ	☐ Վեբ-կայք
☐ Տեղեկատվական թերթիկ	☑ Սահիկաշար, տեղադրում դպրոցի/համայնքի կայքէջում
☑ Տեսանյութ	☐ Համակարգչային խաղի ստեղծում
☐ Ձայնվածք (փոդքաստ)	☑ Բուկլետ
☐ Դասընթացներ	☑ Կլոր սեղան քննարկում
☐ Ցուցահանդես	☐ Ֆլեշմոբ/ տարածում կայքերում
☑ Առաջարկ պատկան մարմիններին	☑ Նամակ/ ուղերձ

Հետազոտության աղբյուրներ
Հայաստանի աշխարհագրություն – դպրոցական դասագիրք (8–9 դասարան) *Բնագիտություն, Աշխարհագրություն դասագրքեր* *Հայաստանի բնական աղետների վերաբերյալ նյութեր և հոդվածներ* *Հայաստանի բնական աղետների մասին ուսումնական նյութեր –* https://arenminasyan12.wordpress.com/2021/12/23/ (*Հայաստանի բնական աղետներ և ինչպես կանխել*) *Բնական աղետների տեսակների մասին տեղեկատվություն –* https://www.purposegames.com/game/types-of-natural-disasters/hyPurposeGames *Ջրհեղեղների, սելավների և սողանքների մասին նյութ –* https://davidepremyan.wordpress.com/2024/02/28/

Երկրաչարժերի մասին տեղեկատվական հոդված –https://inessapanosyan.wordpress.com/2020/02/14/Ինեսսա Փանոսյան Պաշտոնական և վիճակագրական աղբյուրներ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (Փրկարար ծառայություն) Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ծառայություն Պետական վիճակագրական տվյալներ բնական աղետների վերաբերյալ
Գիտելիքի ստուգման եղանակը/թեստ, գրավոր և այլն/
թեստ